

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՊՍՏՆԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԹՐՈՆԹՕ-ԳԱՆԱՏԱ
1976 -ի
ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

ARMENIAN APOSTOLIC
HOLY TRINITY CHURCH
TORONTO - CANADA
1976
ANNUAL REPORTS

1976 ՏԱՐՈՒԱՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(Ներառեալ Առաջնորդական Փոխանորդի
Գործունէութիւն)

Նախ սրտագին կողջունենք Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ Տարեկան
այս ժողովը եւ յաջողութիւն կը մաղթենք ատոր աշխատանքներուն:

Մեր ներկայ տեղեկագիրը կը ներկայացնէ ընդհանուր պատկերը միամեայ մեր
գործունէութեան որպէս հոգեւոր հովիւ այս եկեղեցւոյ եւ Առաջնորդական
Փոխանորդ Գանատայի: Մտածեցինք որ դժուար պիտի ըլլար մեր պարագային երկու
գործունէութիւնները իրարմէ անջատել որքան ատեն որ երկու հանգամանքներն
ալ կը կրենք մեր անձին վրայ: Այսուհանդերձ կարելի չափով զանոնք երկու
երեսներով կը փորձենք տալ առ ի գիտութիւն ձեզի: Անմիջապէս ըսենք որ մեր
Թորոնթօ ժամանման առաջին իսկ օրերէն սկսած մէկէ աւելի անգամներ պաշտօ-
նապէս արտայայտուած էինք որ մեր ստանձնած զոյգ պաշտօններու կիրառութեան
մէջ յաճախ պիտի ստիպուէինք մէկը միւսին համար զոհել որպէսզի որոշ չափով
երկուքն ալ կարենայինք կատարել:

Տրամաբանօրէն անկարելի է երկուքն ալ հարիւր առ հարիւր գլուխ հանել երբ
մարդկային եւ ժամանակի տեսակէտերէ սահմանափակ ենք: Արդար ըլլալու համար
միշտ մեր տեսակէտը եղած է եւ տակաւին է՝ որ Ս. Երրորդութիւն եկեղեցին
ուրիշ հոգեւորական մը պէտք է ունենայ իբրեւ իր հոգեւոր հովիւը ուր լրիւ
ժամանակով ծառայէ իր կարիքներուն, իսկ մենք ալ իբրեւ Առաջնորդական փո-
խանորդ (որ մեր գլխաւոր պաշտօնն է՝ եւ որուն համար Գանատա եկած ենք)
կարենանք այս պաշտօնին մէջ ինկող ըլլոր պարտականութիւնները կատարել
ինչպէս սահմանուած են Առաջնորդ Սրբազանին կողմէ մեզի տրուած Առաջնորդա-
կան փոխանորդի վերաբերեալ յատուկ կանոնադրութեան մէջ: Այստեղ ցաւով կը
հաստատենք այն իրողութիւնը որ տարուան ընթացքին այս հարցի կապակցութեամբ
տարակարծութիւններ եղան ծխական խորհուրդի, պատգամաւորներու եւ մեր միջեւ
սակայն այժմ զոհունակութեամբ կրնանք աւելցնել որ համերաշխ մթնոլորտը
վերահաստատուած է մեր միջեւ եւ այդ ոգիով կը յուսանք արդար լուծման մը
հասնիլ նիւ Եօրքի Առաջնորդարանին մօտ մեր ունեցած շարունակական դիմում-
ներով: Կը թուի որ Առաջնորդարանին նիւթական անձուկ վիճակը գլխաւոր դժ-
ուարութիւնն է մեր հարցի բարւոք լուծման: Այսքանը բաւ համարելով՝ կը
անցնինք մեր հովուական տեղեկատուութեան:-

Նախ յայտնենք որ անցեալ տարուան ըլլոր կիրակիներուն (բացի դաշտահանդէսի
կիրակիէն) Ս. Պատարագ ունեցանք: Երբ իբր փոխանորդ հարկադրուեցանք քաղա-
քէն բացակայիլ՝ երբէք մեր տեղը բաց չ'ըողուցինք, այլ միշտ նախապէս կարգադ-
րեցինք որ հոգեւորական մը գար եւ Ս. Պատարագ մատուցանէր եւ այլ հորհուրդ-
ներ կատարէր: Այսպէս, թէ իբր փոխանորդ եւ թէ այլապէս իբր հիւր հոգեւորա-
կաններ ունեցանք Հոգ. Տնորհ. Ծ. Վրդ. Գասարեանը, (Մոնթրէալէն), Հոգ
Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեանը (Ս. Գաթրինգէն) Տ. Յուսիկ Քհն. Նշանեանը
(Մոնթրէալէն) Տ. Սահակ Քհն. Պալեանը, (Մոնթրէալէն) Տ. Վազգէն Վրդ. Թադրյ
եանը, Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեանը (Միլանօյէն) Տ. Տիրան Քհն. Փափագեանը,
(Քլիվլէնտէն) Տ. Գարեգին Քհն. Գասպարեանը, (Ուէսթչեսթրէն), Տ. Միքայէլ
Քհն. Պուլիերոն (Տիթրոյթէն) եւ Տ. Ներսէս Քհն. Ժեպէճեանը (Սփրինկֆիլտէն):

Խորհրդակատարութիւններու տեսակետէն ունեցանք զգալապէս բեղմնաւոր տարի մը
որ արդիւնք է գաղութիս ուղձացման եւ ծննդաբերութեանց աճի եւ նոր ընտանիք-
ներու կազմութեան: Այսպէս ունեցանք 58 մկրտութիւն, 39 պսակ եւ 22 մահ:
Ասոնցմէ զատ եղան 78 հոգեհանգստեան խնդրանքներ: Հոս սակայն ազգային ցաւ
մը սրտի մէջ ունենալով կուզենք մատնանշել որ յիշեալ 39 պսակներէն 17 խօն

էին, այսինքն 44 առ հարիւրը: Այս պատկերը կը տիրեցնէ մեզ մանաւանդ նկատի ունենալով որ բոլոր ամուսնացողներն ալ անխտիր միջին Արեւելք ծնածներ եւ հայախօսներ են, եւ ոչ թէ այստեղ ծնած ու դաստիարակուած սերունդ: Հայապահանութեան նախանձախնդիր թէ մեր ղեկավարները եւ թէ ծնողներ կարեւորութեամբ ուշադրութիւն պէտք է դարձնեն այս երեւոյթին վրայ՝ եւ Հայերէն լեզուէն գտն ուրիշ պատճառներ պէտք է տեսնեն ասոր մէջ եւ ըստ այնմ միջոցներ խորհին ուղղութիւն տալու երիտասարդ սերունդի տղաներուն եւ աղջիկներուն:

Գաղութիս թուականօրէն արագ աճը եւ մեր այժմու եկեղեցւոյ անբաւարարութիւնը մեզ մղեցին որ նախ 1976-ի գտնուան եւ ապա 1977-ի Ս. ծննդեան արարողութիւնները որոշէինք կատարել Սէյնթ Բրիսթօփըր եւ Սէյնթ Թիոմօսի անկլիքան եկեղեցիներուն մէջ եւ հաւատացեալ ժողովուրդի եռունհրամ ներկայութիւնը թէ մեզ քաջալերեց եւ թէ համոզումը գոյացուց որ անհրաժեշտ է այլեւս ունենալ աւելի մեծ եկեղեցի մը կամ նոյնիսկ երկրորդ եկեղեցի մը Թորոնթօյի մէջ: Այս ուղղութեամբ ծիսական-խորհուրդի մէջ սկսած ենք լրջօրէն խորհիլ եւ նահապարհատական ուսումնասիրութիւն կատարել:

Տարուան ընթացքին կատարած ենք 35 տնօրհնէքներու խնդրանքներ, 80, ընտանեկան այցելութիւններ տարբեր առիթներով, եւ հիւանդներու ու սգակիր ընտանիքներու մեծթարական այցեր:

Նախագահած ենք ծիսական խորհուրդի բոլոր նիստերուն, Ս.Սահակ-Ս.Մեսրոպ ազգ. Շաքաթօրեայ վարժարանի ինամակալութեան կարեւոր ժողովներուն, ինչպէս նաեւ Տիկնանց Միութեան, Տարեց Բաղաքացիներու Միութեան, Կարաց Դասի, ՀեռնԱ-ի ժողովներուն կամ գանազան ձեռնարկներուն մեր կարելիութեան եւ ժամանակին ներած չափով: Կը ցաւինք որ հովուական եւ փոխանորդական պարտավորութիւններով մեր բեռնաւորութեամբ վիճակը թոյլ չի տար բոլորին եւ ամէն տեսն ներկայ գտնուիլ: Այս պատճառով ալ եթէ թերացումներ կրկնան ատոնք մեր կամքէն անկախ կրկնան, քանի առանձին ենք եւ ուրիշ օգնական մը չունինք որպէս հովիւ: Այս պատճառով ալ, օրինակ, Անդամարշաւի յանձնախումբը նոյեմբերէն առաջ չկրցանք ժողովի հրաւիրել: Ամենադիւրին քանն է մեզի նման պատասխանատու պաշտօններ ունեցողը քննադատել, եւ մենք քննադատութիւններ ընդունելու միշտ պատրաստ ենք՝ պայմանաւ որ անոնք ըլլան հիմնաւոր, շինիչ եւ անկեղծ ոգիով: Սակայն կակնկալենք որ քննադատներ իրենք զիրենք նաեւ ղենն մեր դիրքին մէջ եւ զիտակից հասկացողութեամբ մօտենան հարցերուն: Իբր մարդ անսխալական չենք, բայց մեր որոշումները եւ գործունէութիւնները իբր հիմունին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կանոնները, անոր գլուխը եղող Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի տուած ցուցումները եւ մեր թեմական ու համայնքային ընդհանրական շահերը: Մեր պարտականութիւնն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պաշտպանել անոր միութեան դէմ սպառնացող բոլոր տեսակի վտանգներէն եւ բարձր պահել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ անոր գահակալին հեղինակութիւնը:

Մեր ցանկութիւնն էր գաղութէս ներս ազգային եկեղեցական համագործակցական գեանի վրայ հոն գործող հայ ուրիշ յարանուանութիւններու եւ քաղաքական ու Բարեգործական կազմակերպութիւններու հետ միասին Ապրիլեան եղեռնի սպառնալից ինչպէս նաեւ վարդանանքը, Արտարապատը եւ Թարգմանջացը տօնել: Սակայն սրտի ցաւով կը յայտարարենք որ անոնցմէ ոմանց մեր Մայր Եկեղեցւոյ դէմ ունեցած իրենց դիրքաւորման պատճառով ձեռնդրեցաւ Ապրիլ 24-ի շուրջ մեր կատարած փորձը ու մենք հարկադրուեցանք առանձին գայն նշել: Վարդանանցօտնին երեկոյեան Ս. Պատարագ մատուցինք եւ ապա վարդանանցապետներու կողմէ կազմակերպուած ձեռնարկին մեր մասնակցութիւնը բերինք որպէս օրուան քանախօս:

Թորոնթոյի եւ Ս. Գաթրինգի ՀեռկԱ-յի մասնաճիւղերու կողմէ կազմակերպուած կրօնական սէմինարին ներկայ եղանք: Սեմինարի ղեկավարն էր Տ. Ներսէս ԲԻՆ, ծեպէճեան (Սփրինկփիլտէն):

Լիբանանի պատերազմը ունեցաւ իր աղիտալի հետեւանքները այնտեղ հաստատուած շուրջ 225,000-ի հասնող հայահոծ եւ շէն Հայ գաղութին վրայ, որ ըստ տեղեկութեանց տուաւ մօտ 400 զոհեր, եւ բազմաթիւ վիրաւորներ, որքացան հարիւրաւոր-մանուկներ, վնասուեցան հայ վարժարաններ եւ եկեղեցիներ եւ բազմաթիւ հայ սեփական բնակարան ր եւ վաճառատուներ: Շուրջ 9,000 ընտանիքներ զրկուեցան առօրեայ ուտելիքի պաշարէ: Այսպիսի շնախատեսուած աղէտի մը առթիւ սփիւռքահայութիւնը անտարբեր չէր կրնար մնալ եւ ուստի ընդառաջելով Ամենայն Հայոց կաթողիկոսին կոչին՝ Թորոնթոյի մեր եկեղեցին եւ տեղւոյն Հ.Բ.Ը.Մ.ը միասնաբար կազմակերպեցին հանգանակութիւն մը ի նպաստ լիբանանահայութեան օժանդակութեան, որմէ գոյացաւ շուրջ 12,500 տոլար: Այդ առթիւ մեր մէջ ունեցանք ծանօթ բանաստեղծ եւ մտաւորական պրն. Վահէ Վահեանը:

Բայց այսքանով չէր վերջանար մեր օժանդակութեան գործը: Լիբանանահայերու գաղթ մը նը սկսէր դէպի Գանատա, մասնաւորաբար անմիջական հարազատներ ունեցող ընտանիքներու: Յատուկ դիւրութիւն ձեռք ձգելու նպատակով մեր նախածնունդեմք եւ Հայ կաթողիկէ եւ Աւետարանական հովիւներու մասնակցութեամբ մասնաւոր տեսակցութիւն ունեցանք օրուան գաղթային նախարար պրն. Ռոպերթ Անդրասին հետ եւ ննդրագիր ներկայացուցինք: Այս հանդիպումը տուաւ դրական արդիւնք որուն հետեւանքով հարիւրաւոր լիբանանահայ ընտանիքներ եկան հաստատուելու գլխաւորաբար Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ: Տարուան 9 ամիսներու ընթացքին մենք ըլլայ մեր գրասենեակէն ներս, ըլլայ յաճախ անձամբ իմիկրէյ-շրթ-ի գրասենեակներ երթալով ջանացինք օգտակար հանդիսանալ շատերու՝ մեր հոգեւորականի եւ հղճի պարտքը կատարելով: Զգալիօրէն Թորոնթոյի մեր գաղութը մեծցաւ եւ նոր հարցեր կը դրուին մեր առջեւ: Գանատական կառավարութեան նոր որոշման եւ լիբանանեան մի քանի ամիսներուն կասած է լիբանանահայերու հոսանքը դէպի Գանատա եւ ընդհակառակը՝ կիմանանք որ եկածներէն ոմանք արդէն կը վերադառնան լիբանան: Այսուհանդերձ հոս հաստատուող լիբանանահայերուն բարի գլուստ կը մաղթենք եւ յաջողութիւն իրենց համար այս նոր եւ հիւրընկալ երկրին մէջ: Կը յուսանք որ անոնք իրենց բաժինը կը բերեն տեղւոյն ազգային եւ եկեղեցական գործունէութիւններուն՝ եւ կը նպաստեն մեր գաղութի վերելքին եւ միասնականութեան:

Ցաւալի է անշուշտ հաստատել որ երբ մէկ կողմէ նոր ընտանիքներ կը կազմուին՝ միւս կողմէ սակայն կազմուած կարգ մը ընտանիքներ կը քանդուին կամ լուծման վտանգին կենթարկուին զանազան պատճառներով: Մենք մեր հոգեւորականի բարոյական պարտքը համարելով պահպանել ընտանեկան միութիւնը՝ երբ մեզի դիմուած է խորհուրդի եւ հաշտարար միջամտութեան համար՝ այդ երբէք չենք զլացած, ընդհակառակը՝ անգին ժամանակ տրամադրած եւ շունջ սպառած ենք արդիւնքի յանգելու համար: Գոհունակութիւնը ունինք որ կարգ մը ընտանիքներու միութիւնը փրկուած է, մինչ ուրիշներ դիմած են ամուսնալուծման:

Ներկայ եղած եւ քաջաւերած ենք գաղութիս մէջ գործիչ, բարեգործական եւ մշակութային միութիւններու զանազան ձեռնարկները: Այցելած ենք շաքաթօրեայ դպրոց եւ ներկայ եղած ատոր եւ ամառնային դպրոցի ամսվերջի հանդէսներուն:

Տարեց քաղաքացիներու Միութիւնը օժտեցինք կանոնագրով եւ զայն դարձուցինք եկեղեցական կազմակերպութիւններէն մին՝ նախագահութեամբ հոգեւոր հովուին: Ատոր համաձայն կատարուեցաւ նոր վարչութեան ընտրութիւնը: Ատենապետուհի միւրրնտրուեցաւ անոր ժրջան հիւնարդիրներէն՝ Տիկին Միրուն Համամճեան:

* Արարեալստեղծի ղեկարկով անհատաբար մեզին

Այս բոլորէն յետոյ կուգէինք մեր զոհունակութիւնը յայտնել որ ծեական խորհուրդը ի վերջոյ ընդունեց հետեւեցւոյ գրասենեակի գործերուն համար լրիւ ժամանակով քարտուղարի մը անհրաժեշտութեան գաղափարը: Նախ այդ պաշտօնին կոչուեցաւ Գրիգոր Սրկ. Զմբուհատեանը (Մարտէն-Յունիս) եւ սպա օրիորդ Թամար Պալեօգեանը որ Սեպտեմբերէն ի վեր հղմամանքով կը կատարէ իր գործը, որուն համար շնորհակալ ենք:

Այժմ ամփոփ կերպով անդրադառնանք թեմական Մարզի մէջ մեր տարած գործունէութեան իբրեւ Առաջնորդական Փոխանորդ

Համիլթընի մէջ հիմնեցինք ծուխ մը Ս. Աստուածածին անունով եւ մեր ամիջական հսկողութեան տակ առինք զայն կարգադրելով որ ամիսը մէկ անգամ Ս. Պատարագ մատուցուի մինչեւ որ Ս. Գաթրինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին օժտուեցաւ իր մնայուն հոգեւոր հովիւով յանձին Հոգ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեանի, որ Լիոնէն (Փրանսա) Գանատա ժամանեց Յուլիսի վերջերուն եւ մեր կարգադրութեամբ եւ երկու եկեղեցիներու ծեական Խորհուրդներու միացեալ համաձայնութեամբ ստանձնեց նաեւ Համիլթընի պատասխանատուութիւնը: Ուրախ ենք որ այդ կողմէն որոշ չափով մեր բեռը թեթեւցաւ:

Միւս կողմէ սակայն անցեալ Զատիկուան շրջանին ստիպուեցանք Մոնթրէալ երթալ եւ զբաղիլ տեղւոյն հոգեւոր հովուի եւ ծեական Խորհուրդին միջեւ ծագած տարակարծութիւններով: Միաժամանակ աւելի մօտէն կրցանք ծանօթանալ տեղւոյն եկեղեցական կազմակերպութիւններուն: Իր ցանկութեամբ եւ Առաջնորդ Սրբազանին որոշումով Հոգ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան Մոնթրէալէն տեղափոխուեցաւ Արինֆիլտ (Միացեալ Նահանգներ): Այժմ Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին պաշտօնական հոգեւոր հովիւ չունի: Անպաշտօն կերպով այնտեղ կը ծառայեն Արժանապատիւ Տ. Յուսիկ Բն. Նշանեանը եւ Տ. Սահակ Բն. Պալեանը:

Գանատայի մեր եկեղեցիներուն մէջ տարբեր առիթներով կատարեցինք սարկաւազական ձեռնադրութիւններ լրացնելու համար պակաս մը այդ մարզին մէջ: Մոնթրէալի մէջ աւագ սարկաւագ ձեռնադրեցինք Յարութիւն Սրմաքէշեանին, Թորոնթօյի մէջ՝ Օննիկ Մարտիկեանին, Գրիգոր Թոգաքեանին եւ Մուրատ Գարագաշեանին, Ս. Գաթրինգի մէջ՝ Գրիգոր Տէր Գրիգորեանին, Տօթթ. Վահէ Սվաճեանին, Անդրանիկ Պօյաճեանին* Սիմոն Խաչատուրեանին, Վարդվառ Խաչատուրեանին, Տօթթ. Արթիւր Գարայեանին, Սմբատ Գոսթանճեանին եւ Զօհրապ Տոպրասեանին ծառայելու համար Ս. Գաթրինգի եւ Համիլթընի եկեղեցիներուն: Նոյնպէս ղարուճեան չորս աստիճաններ շնորհեցինք համիլթընի նորակազմ ղարաց ղասի անդամներուն:

Տարուան ընթացքին որպէս պաշտօնական հիւր քարձրաստիճան հոգեւորականներ ունեցանք Թուրքիոյ Հայոց պատրիարք Ամենապատիւ Տ. Շնորհք Արքեպ. Գալուստեան որ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեանի այցելեց եւ ի նպաստ Հայ գաղթականներու հանգանակութիւն կատարեց Մոնթրէալի, Թորոնթօյի եւ Ս. Գաթրինգի մէջ: Նոյնպէս Գալիֆօրնիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Եպիսկ. Տոլմէֆեան Մոնթրէալ այցելեց Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ օժման 5-րդ տարեդարձին առթիւ: Մենք ալ ներկայ եղանք: Իսկ մեր հրաւերով Հայաստանէն՝ Տ. Արամ Բն. Պօյաճեան (Լենինականէն) եւ Տ. Արտակ Բն. Սիմոնեան (Ս. Էջմիածնէն) այցելեցին Թորոնթօ, Ս. Գաթրինգ եւ Համիլթըն: *Մանթրէալ*

Մասնակցեցանք ֆիլատելֆիոյ մէջ գումարուած թեմական պատգամաւորական ժողովին:

Վերանորոգեցինք Հայաստանեայց Ազգեւկան Եկեղեցւոյ անդամակցութիւնը Գանատական Եկեղեցիներու Խորհուրդին որուն 11 եկեղեցիներ կանգամակցին: Գործօն մասնակցութիւն բերել սկսանք անոր կեանքէն ներս զգալի դարձնելով Հայց. Եկեղեցւոյ ներկայութիւնը եւ զայն ծանօթացնելով օտարներուն: Անդամ ընտրուցանք կեդրոնական վարչութեան եւ գործադիր մարմին:

* Եւ կարպիւս Զաքարեանի, իսկ այսպէս կեղծաբանութեամբ շնորհակցեցինք Ակօսի Գոսթանճեանին,

Առաջին անգամ ըլլալով մեր գլխաւորութեամբ պատգամաւորութիւն մը՝ յանձինս Տիկին Մատլէն Տէօվլէթեանի եւ Գրիգոր Զմրուխտեանի՝ մասնակցեցաւ ԿԼԷԿՍ Պէյի (նովա Սըրշիա) մէջ գումարուած Գանատական եկեղեցիներու հորհուրդին եռամեայ ընդհանուր համագումարին:

Պաշտօնական ա յցելութիւններ տուինք պետական վարիչներու՝ ինչպէս Օնթարիօ նահանգի Կոն-կառվարչուհի Վսեմաֆայլ Տիկին Փօլին Մարտիարոնին; վարչապետ Ուիլիերմ Տէյվիսին, Թորոնթօյի քաղաքապետ՝ Տէյվիտ Քրոմպիին եւ միջ-քաղաքապետական հորհուրդի նախագահ՝ Փօլ Կատֆրիին, որոնց բոլորին չայ ժողովուրդի հրահատագիտութիւնը յայտնեցինք: Այս ա յցելութիւններուն մեզի ընկերակցեցաւ Տէր եւ Տիկին Արթօ Գաւուք եւ վերջին երկուքին նաեւ պարոն Հրանդ Սուլին:

Այցելեցինք նաեւ մեր հեռաւոր վանքուվրրի Հայ գաղութին եւ ծանօթացանք տեղւոյն կացութեան: Ասկէ գատ պատարագեցինք Հարթֆրտի Ս.Գէորգ եկեղեցւոյ մէջ եւ նախագահեցինք ու խօսեցանք անոր 23-րդ տարեդարձի ձեռնարկին:

Առաջին անգամ ըլլալով ներկայ եղանք Գանատայի Անկլիքան եկեղեցւոյ Եպիսկոպոսական ժողովին որ տեղի ունեցաւ Նիակարա ֆուլգի մէջ եւ մեր ողջոյնի խօսքը բերինք ընդհանուր ծանօթութիւն մը տալով նաեւ Հայց. եկեղեցւոյ մասին:

Այցելեցինք Օթթաւայի մեր նորահաստատ եւ փոքրաթիւ գաղութին եւ Ս.Ծննդեան տօնի առթիւ Ս.Պատարագ մատուցինք:

Մասնակցեցանք Ս.Էջմիածնի մէջ Միւռնօրհնութեան եւ Վեհափառ Հայրապետի 20-ամեակի հանդիսութեանց:

Իսկ Գանատայի մէջ առանձին թեմ հիմնելու նպատակով մեր աշխատանքները յառաջ տարինք կանոնադրի Յանձնախումբի մշակած թեմական կանոնագիրը ենթարկելով Գանատայի մեր եկեղեցիներու Շրջանային ժողովին ուսումնասիրութեան: Այդ ժողովը երկու անգամ գումարուեցաւ, 28 Օգոստոսին՝ Թորոնթօյի մէջ եւ 30 Հոկտեմբերին Մոնթրէալի մէջ՝ վերջինս Առաջնոր Գերշ. Ս. Թորգոմ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ: Յաջորդ ժողովը տեղի պիտի ունենայ 29 Յունուար 1977-ին, Թորոնթօյի մէջ; շարունակելու համար կանոնագրի բննարկութիւնը:

Այստեղ այլեւս կուզենք վերջ դնել տեղեկատուութեան մեր բաժնին աւելցնելով որ 1977-ի ընթացքին պիտի ջանանք աւելի ժամանակ տրամադրել Թորոնթօյի գաղութի մեր գործերուն եւ մասնաւորաբար հետապնդել երկու կենսական ծրագիրներ՝ նոր եկեղեցւոյ մը շինութեան կամ գնման հարցը եւ մարդահամարի հետ միատեղ անդամարշաւ: Երկու հարցերն ալ կը պահանջեն ծրագրեալ եւ յարատեւ աշխատանք եւ համագործակցութիւն եկեղեցւոյս եւ ընդհանրապէս գաղութիս անդամներուն նորով: Կը հնդրենք որ նախ մեր անդամները չզլանան իրենց աջակցութիւնը երբ դիմենք իրենց ի շահ մեր եկեղեցւոյ եւ գաղութի յառաջդիմութեան:

Այս առթիւ մեր գնահատանքը եւ շնորհակալութիւնը կուզենք յայտնել պատուարժան ծիսական հորհուրդին, Տիկնանց Միութեան եւ անցեալ տարուան վարչութեան, Տարեց քաղաքացիներու Միութեան, Դպրաց Դասին՝ անոր վարչութեան եւ խմբավորներուն, Սարկաւազներուն, ՀեճնԱյի երէց եւ կրտսեր մասնա ճիւղերուն, Ս.Սահակ-Ս.Մեսրոպ վրժ.ի խնամակալութեան, Տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, Կիրակնօրեայ վարժարանի ուսուցչական կազմին, նոր Սերունդի վարչութեան, Գրադարանապահ Ճօրժ Շիրինեանին, Հոգատար՝ Սերոբ ծարուկեանին, եւ բոլոր այն անդամներուն եւ բարեկամներուն որոնք իրենց նուիրեալ ծառայութեամբ եւ նիւթական աջակցութեամբ սատարեցին Ս.Շրրդ. Հայց. եկեղեցւոյս արդիւնալից յաջողութեան եւ պայծառութեան:

Տէրը օրհնէ եւ վարձատրէ բոլորը

Արիս Եպիսկ. Շիրվանեան
Հոգեւոր հովիւ Ս.Շրրդ. եկեղեցւոյ
եւ Առաջնորդական փոխանորդ Գանատայի

PASTORAL REPORT

For the year 1976

(Including activities of the Vicar General)

First we wholeheartedly greet this Annual Assembly of the Holy Trinity Armenian Church and wish success for its work.

Our present report presents a general picture of our annual activities as pastor of this church and as Vicar General of the Primate for Canada. In our case we thought that it might be difficult to separate the two activities from one another as long as we have assumed both functions on ourselves. Nevertheless we will try to give you the two sides of the picture for your information. Let us immediately state that from the very first days after our arrival in Toronto we had officially declared more than once that during the performance of our dual functions at times we would be obliged to sacrifice one for the other so that we could carry out both to a certain extent. Logically it is impossible to carry out both 100% since physically and timewise we are limited. To be fair, our view has been and still is that the Holy Trinity Church should have another clergyman as its pastor who will be able to serve her needs full time, and we as Vicar General of the Primate (which is our main function and for which we have come to Canada) will be able to perform all the duties that fall within the limits of the latter, as defined in the special bylaws governing the Vicar General that was given us by the Primate. We regretfully state here the fact that during the last year disagreements arose about this question between the Parish Council, the Diocesan delegates and ourselves. However, we can add now that an atmosphere of understanding has been restored between us and we hope that with the same spirit we can attain a fair solution by our continuous appeals with the Diocese of New York. It seems that the financial trouble of the Diocese is the main cause of the difficulty in finding a good solution for our problem.

This much being sufficient, we now pass to our pastoral activities:-

First, let us state that we had divine liturgy all the Sundays throughout the year except the Sunday of the picnic, when we had morning services only. When we had to be out of town on Vicarship duties we never left our place vacant, but previously made an arrangement for a clergyman to replace us by celebrating the divine liturgy and performing other sacraments. Thus we had the following clergy either as a replacement or as special guests: Father Shnork Kasparian (Montreal), Father Kegham Zakarian (St. Catharines), Father Jirayr Tashjian (Milano), Father Vasken Tatoyan (Stuttgart), Father Nerses Jebejian (Springfield, Mass.), Father Karekin Kasparian (Westchester, N.Y.), Father Housig Nishanian (Montreal), Father Sahag Balian (Montreal), Father Diran Papazian (Cleveland, Ohio), Father Michael Buttero (Detroit, Mich.).

From the pointview of the sacraments we had a significantly fruitful year that is a result of the growth of our community and the increase of births and the formation of new families. Thus we had 58 baptisms, 39 weddings and 22 funerals. Besides there were 78 requests for requiem service. But we like to point out with a regret as an armenian that out of the said 39 weddings 17 were mixed marriages, that is 44%. This picture saddens us especially since all those marrying armenians are ones that are born and

and raised in the Middle East and are armenian speaking and they are not the ones born here and English speaking. Those of our community leaders and parents who have the zeal of preserving our Armenian identity should pay a special attention to this aspect and besides the question of the Armenian language they must look into other reasons and accordingly they should think of means to give direction to the young generation of boys and girls.

The numerically fast increase of our community and the insufficiency of our present church forced us to decide first to have the Easter 1976 services at St. Christopher on the Heights Anglican Church and Christmas 1977 at St. Timothy Anglican Church. The attendance by the hundreds of the faithful encouraged us and brought us to the conclusion that it is necessary now to have a larger church or even a second church in Toronto. In the parish Council we have started to have preliminary studies.

During the year we had 35 requests for home blessings, 80 home visits on various occasions, and other visits to comfort the sick and bereaved families.

We have presided over all the sessions of the Parish council, and over important meetings of St. Sahag-St. Mesrob school Board of trustees, as well as over the meetings or affairs by the Ladies Society, Senior citizens club, the choir, and the ACYO to the extent of our possibilities and when time permitting. We regret that with the overload of our pastoral and Vicar General's duties we cannot attend all time. For this reason if there are any failures those happen against our will since we are alone and we don't have an assistant as a pastor. For this reason, for example, we couldn't call the Membership Drive Committee to a meeting before November. It is the easiest thing to criticize a person like us who holds responsible jobs and we are ready to accept criticisms provided that they are founded, constructive and in a sincere motivation. But we also expect that critics place themselves in our position and approach the questions with mature understanding. As a human being we are not infallible, but our decisions and activities have as their basis the canons of the Armenian Apostolic Church, the direction given by His Holiness the Catholicos of All Armenians, and the general interest of our Diocese and community. It is our duty to defend the Armenian Apostolic Church against all the dangers that threaten her unity and to uphold high the authority of the Mother See of Holy Etchmiadzin and its Catholicos.

It was our desire to celebrate the Martyrs Day, Vartanank, Sardarabad and Tarkmanchatz in our community in a national-religious joint co-operation together with other Armenian denominations, political and Benevolent organizations. Yet we regretfully state because of the opposition of several of them against our Mother Church our attempt failed with regards to April 24 and we had to commemorate it alone.

At the Feast of St. Vartanank we celebrated divine liturgy in the evening and later on took part in the program prepared by the Knights of Vartan as the main speaker.

We attended the religious Seminar organized by the ACYO chapters of Toronto and St. Catharines. The leader was Father Nerses Jebejian (from Springfield).

The war in Lebanon had its tragic consequences for the approx. 225,000 Armenians who were settled there and had a prosperous life. According to the news 400 of them were killed and hundreds were wounded. Hundreds of children were orphaned. Armenian schools, churches and many private homes and stores were damaged. About 9,000 families were deprived of their daily bread. Before an unanticipated tragedy like this Armenians abroad couldn't remain indifferent and therefore, in response to the general appeal made by His Holiness the Catholicos of All Armenians our Toronto Church and the A.G.B.U. jointly organized a fund raising campaign to help Armenians in Lebanon. About \$12,500 was collected. On that occasion we had amongst us the well known poet and intellectual Mr. Vahe Vahian.

But our work for help didn't end here. An immigration to Canada by Lebanese-Armenians began, especially by those who had immediate relatives. With the purpose of easing the regulations, with our initiative and with the participation of the Armenian Roman Catholic and Evangelical pastors, we had a special audience with the Minister of Immigration and Manpower of the day, Mr. Robert Andras and presented him a petition. This meeting had its positive effect and consequently hundreds of Lebanese-Armenian families came to settle mainly in Toronto and in Montreal. During the 9 months of the year, be it in our office or be it sometimes by personally going to Immigration offices, we tried to help many people by performing our moral and religious duties. Our community in Toronto grew significantly and this fact poses new questions before us.

As a result of the new decision of the Canadian government and of the cessation of the Lebanese war the immigration of Lebanese-Armenians the last few months to Canada has stopped and on the contrary, we hear that certain people from the newcomers are already returning to Lebanon. However, we welcome those Lebanese-Armenians who are settled here and wish them good luck in this new and hospitable land. We hope that they will take part in the local national and religious activities and will contribute to the progress and unity of our community.

It is of course regrettable to state that when on one hand new families are formed, on the other hand certain other formed families are being ruined or subjected to the danger of divorce for variety of causes. We considering our moral obligation to maintain the family unity, have never declined to play a role of conciliatory arbitration when we have been asked, on the contrary, we have given a lot of time and exhausted efforts to achieve results. We are happy that the unity of certain families has been saved, whereas others have applied for divorce.

We have attended and encouraged various events put up by benevolent and cultural unions within the community. We have visited the St. Sahag-St. Mesrob Armenian School and attended its graduation program as well as that of the Summer School.

We made Bylaws for the Senior Citizens Club and made it one of the church organizations with the Pastor as its president. Accordingly a new committee was elected. One of the diligent founders of the club, Mrs. Siroun Hamamjian, was re-elected as chairman.

After all these we would like to express our satisfaction that at last the Parish Council adopted the idea of having a full-time secretary to do the office work. First, deacon Krikor Zamroutian was given the job (from March to June) and then Miss Tamar Baliozian was assigned to the position in september and she is doing it conscientiously since then, for which we thank her.

Now let us briefly present you our activities on the Diocesan level as Vicar General:-

We established a parish in Hamilton, St. Mary's Armenian Church, and we personally supervised it and arranging that divine liturgy be celebrated once a month until the time when St. Gregory Armenian Church of St. Catharines had its permanent pastor, very Rev. Kegham Zakarian who arrived in Canada from Lyon (France) the end of july and by our arrangement and with the joint agreement of both Parish Councils he accepted the Pastoral charge of Hamilton as well. We are glad that our burden became lighter from that side.

Yet on the other hand last Easter time we had to go to Montreal to look into the disagreements that had risen between the pastor and the Parish Council. At the same time we got acquainted with the local church organizations. By his wish and by the decision of the Primate Father Shnork Kasparian moved from Montreal to Greenfield (U.S.A.). At present the St. Gregory church of Montreal is without an official pastor. Rev. Housig Nishanian and Rev. Sahag Balian serve there in unofficial capacity.

On different occasions we ordained deacons in our Canadian churches to fulfil needs. We ordained deacon the following:- Haroutuine Surmakeshian (Montreal), Onnig Mardigian, Krikor Tozakian and Mourad Karakashian (Toronto), Krikor Der Krikorian, Dr. Vahe Svadjian, Antranig Boyajian and Garbis Zakarian (St. Catharines). and we conferred authority on the following to be stole-bearers:- Megerditch Krikorian (St. Catharines), Simon Khatchadourian, Vartevan Khatchadourian, Dr. Arthur Karayan, Sempad Bostanjian and Zohrab Dobrassian (Hamilton), to serve in the churches of St. Catharines and Hamilton. We also conferred the rank of "tbir" on the choir of Hamilton.

During the year we had as official guests high-ranking clergymen such as the Armenian Patriarch of Turkey, His Beatitude Archbishop Shnork Kaloutian, who accompanied by Very Rev. Khajag Barsamian, visited Montreal, Toronto and St. Catharines and collected contributions for Armenian immigrants in Turkey. Also His Grace Bishop Vatche Hovsepian, Primate of the Western Diocese, visited Montreal on the Occasion of the 5th anniversary of St. Gregory Church. We attended that event, too. By our invitation two priests from Armenia, Rev. Aram Boyajian of Leninakan, and Rev. Ardag Simonian of Holy Etchmiadzin, visited Toronto, St. Catharines and Montreal.

We participated in the Diocesan Assembly held in Philadelphia. We renewed the membership of the Armenian Apostolic Church in the Canadian Council of Churches to which 11 churches are members. We began to bring active participation in its life by making the presence of the Armenian church felt in the council and by introducing it to others. We were elected to the General Board and to the executive committee of the Canadian Council of churches.

For the first time a delegation headed by us and comprising of Mrs. Madelein Dovletian and deacon Krikor Zamroutian participated in the triennial Assembly of the Canadian Council of churches held in Glace Bay (Nova Scotia).

We paid official visits to government leaders such as the lieutenant-governor of Ontario the Honorable Mrs. Pauline McGibbon, Premier William Davies, the Mayor of Toronto, Mr. David Crombie, the Metropolitan Chairman, Mr. Paul Godfrey, to all of whom we conveyed the gratitude of the Armenian people. At all these visits we were accompanied by Mr. & Mrs. Arto Cavouk and at the last by Mr. Hrant Souin as well.

We also visited our remote community of Vancouver and got acquainted with the local situation. Besides, we celebrated the divine liturgy at St. George Armenian church in Hartford, Conn., and presided over and gave a speech at its 23rd anniversary event.

For the first time we attended the meeting of the Bishops of the Anglican Church of Canada in Niagara Falls and addressed them by bringing greetings and giving them a general picture of the Armenian church.

Recently we visited our newly established and the small community of Ottawa and celebrated the divine liturgy occasion of Armenian Christmas.

We participated in the Blessing of the Chrism and twentieth anniversary celebration of His Holiness in Holy Etchmiadzin.

And we continued to pursue our work with the purpose of establishing a separate diocese in Canada by submitting the Diocesan Bylaws prepared by the Bylaws committee to the study of the regional meeting of our Canadian churches. That meeting was convened twice, on August 28 in Toronto and October 30 in Montreal, the latter being presided over by the Primate Archbishop Torkom. The next meeting will be held on January 29, 1977 in Toronto, to continue the examination of the Bylaws.

Now we like to end our report adding that during 1977 we will try to allocate more time to our work in Toronto and especially to pursue two vital plans, that of building or purchasing a new church and that of a census of the Armenian population in Metro along with the membership drive. These two problems require planned and continuous efforts and cooperation by the members of this church and of the community in general. We request our members not to refuse to lend their support when we ask them for the benefit of our church and the progress of our community.

At this time we would like to express our appreciation and thanks to the Parish council, Ladies Society and its outgoing Executive, (The Senior Citizens' Club, the Choir and its executive and the conductors, the deacons, the ACYO Senior and Junior Chapters, St. Sahag-St. Mesrob Armenian School's Board of Trustees, the principal and the teachers, the Sunday School teachers, The staff of Nor-Serount, The Librarian George Shirinian, the caretaker Serop Zaroukian, and all the members and friends who by their devoted service and financial assistance aided the Holy Trinity Armenian Church to have fruitful and prosperous year.

May God bless and reward all.

Bishop Aris Shirvanian
Pastor of The Holy Trinity Armenian
Church
and Vicar General for Canada

Jan. 19, 1977

ԾԽԱԿԱՆ ՁՈՐՀՈՒՐԴԻ ՏԵՂԵԱԳԻՐ
1976 ՄԱՐՏԻ

ծխական խորհուրդը իր առաջին ժողովը ունեցավ Փետրուար 18, 1976-ին եւ իր
դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.-

Մինաս Սելեան
Հրանդ Սուխ
Ժիրայր Երէցեան
Երուանդ Չուլճեան
Մարտիկ Հեքիմեան
Մուշեղ Շահնազար
Պետրոս Գոգորեան
Եղուարդ Էօտեմիշլեան
Միսաք Գոմեմիսեան

Ատենապետ
Փոքր Ատենապետ
Ատենադպիր
Փոքր Ատենադպիր
Գանձապահ
Փոքր Գանձապահ
Սրահի եւ նորոգութեանց
Ընկերային ձեռնարկներ
Ձեռնարկներ

Ժողովներ:- Ունեցանք 30 հերթական ժողովներ 1976-ին: Ժողովներ գումարուեցաւ
նաեւ եկեղեցւոյ միւս կազմակերպութիւններու եւ թեմական պատգա-
մաւորներու հետ:

Եկեղեցական արարողութիւններ:- 1976-ին տեղի ունեցան:- 58 կնուք, 29 Ամուս-
նութիւն, 22 Թաղում, 78 Հոգեհանգիստ:
Ս. Պատարագը մատուցուեցաւ ամէն կիրակի առաւօտ ի բացառեալ Յունիս
20, 1976-ին դաշտագնացութեան օրը:

Այգիւու Եղիբաբներ:- 1976-ին հետեւեալ այգիւու կղերականները պատարագեցին:-
Տ. Գարեգին ք. Գասպարեան, Տ. Ներսէս ք. Ժեպեմեան, Տ. Յուսիկ ք. Նշանեան,
Տ. Շնորհի Ժ. Վրդ. Գասպարեան; Տ. Տիրան ք. Ժափագեան, Տ. Գեղամ Ժ. Վրդ. Զեքարեան,
Տ. Միքայէլ ք. Պուլթերո, Տ. Սահակ ք. Պալեան, Տ. Արտակ ք. Սիմոնեան,
Տ. Ժիրայր Վրդ. Թաշմեան, Տ. Վազգէն Վրդ. Թաճոյեան:

Եկեղեցական Ձեռնարկներ:-

- 1- Փետր. 1, 1976- Պրն. Ժ. Փետերեանի Եզիպտոսի Բուրգերու դասախօսութիւնը:
- 2- Մարտ 19, 1976- Պրն. Ե. Տէօվլէթեանի Աստուածաբանական դասախօսութիւնը:
- 3- Ապրիլ 22, 1976 - Շնորհի Ժ. Վրդ. Գասպարեանի կրօնական դասախօսութիւնը:
- 4- Ապրիլ 24, 1976- Մեր ազգային Ազատօնը այս տարի յիշուեցաւ մեր եկեղեցւոյ
կողմէ միայն: Օրուան բանախօս էր Տօրթ. Գէորգ Քէշիշեան:
- 5- Մայիս 1, 1976- Եկեղեցւոյ զարնանային պարահանդէսը:
- 6- Մայիս 23, 1976- Մարտարապատի հերոսամարտի նշանակութիւնը-հանդիսութիւնը:
Օրուան բանախօս էր Ս. Էջմիածնի կղերականներէն Տ. Արտակ ք. Սիմոնեան:
- 7- Յունիս 20, 1976- Եկեղեցւոյ տարեկան դաշտահանդէսը (Փեթիքօթ Բրիք)-ի մէջ:
Մենք այս վայրը կը գտնենք ժողովրդական:
- 8- Յունիս 28, 1976- Գնահատանքի երեկոյ Շաքաթօրեայ եւ կիրակնօրեայ վարձա-
րաններու ուսուցիչներուն եւ հոգաբարձուներուն համար:
- 9- Սեպտ. 6, 1976- Ամուսնի երեկոյ, կատարմամբ Թագուհի Յոբեանի-Երեուանէն:
- 10- Նոյ. 1, 1976- նարտախաղի երեկոյ:
- 11- Դեկտ. 5, 1976- Եկեղեցւոյ 23րդ տարեդարձը, օրուան հիւր բանախօս ունենա-
լով Տ. Գարեգին ք. Գասպարեանը: 15, 000 տոլարի նուիրատուութիւն մը հաւաք-
ուեցաւ:
- 12- Դեկտ. 22-23, 1976- Օնթարիօյի Գիտական կեդրոնի Հայկական շաքաթը:

2. Ինքնադրույթ:

1- Հայկական հեռաձայնի գրքոյկը: - 1976-ին այս գրքոյկը կրկին հրատարակուեցաւ եկեղեցւոյս շահ ապահովելով պատկանելի գումար մը:

2- Լիբանանահայութեան օգնութեան ֆոնդ: - քաղաքիս Հ.Բ.Ը.Մ-ի հետ միատեղ կազմակերպեցինք Լիբանանահայերուն նիւթապէս օգնելու այս հանգանակութիւնը ներկայութեամբ քանաստեղծ Վահէ Վահեանի, 12,000 տուարէ աւելի գումար մը հաւաքուեցաւ:

3- Գայանէ Պարախումբ: - ծխական խորհուրդիս ենթախմբակները ներկայիս կը բաղկանայ: - Տիկ. Ն. Խոնաճեան, Ատենապետ, Պրն. Ժ. Խորիկեան, Փոխ Ատենապետ, Տիկ. Թ. Տէր Օհանեան, Ատենադպիր, Տօքթ. Մ. Զաքարիա, Գանձապահ: Պարախումբի ներկայ պարուստոյցն է Օր. Աստղիկ Քէօշկէրեան:

Պարախումբը պարեց Ապրիլ 11, 1976-ին (Հարպըր ֆրոնդ ֆեսթիվալին) եւ Մայիս 28, 29, 1976-ին Տոն Միլզ Փլազայի մէջ:

4- Տարեց քաղաքացիներ: - Պատրաստեցին ծրագիր կանոնագիր մը իրենց համար:

5- Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեանի այցելութիւնը: - Զինք ընդունեցինք նոյ. 4, 1976-ին եւ 1600 տուար նուիրատուութիւն հաւաքեցինք Պատրիարքարանին համար:

6- Եկեղեցւոյ Բարտուղար: - Այս պաշտօնը ալ մնայուն գործ մըն է մեր եկեղեցւոյ համար: Օր. Թամար Պալեօզեանը կը վարէ այս պաշտօնը:

7- Նորոգութիւններ: - Այս տարի որպէս գլխաւոր ծախս ունեցանք եկեղեցւոյ արտաքին նորոգութիւնները:

8- Նոր եկեղեցի մը ունենալու հարցը: - Մեր եկեղեցին այլեւս փոքր է մեր զաղութին համար: Կազմեցինք յանձնախումբ մը որուն պարտականութիւնն է քննել ու յանձնարարութիւններ ըրիլ ծխական խորհուրդին նոր եկեղեցի մը ունենալու կարելիութիւններու մասին: Այս յանձնախումբը կը բաղկանայ հետեւեալներէն. - Պարգեւ Խոնաճեան Ատենապետ, Թազուր Յոփեան Խորհրդական, Թազուր պոտուրեան Խորհրդական, Սուրէն Աճեմեան Խորհրդական, Հայկ Սելեան Խորհրդական:

Երբ իրենց տեղեկագիրը ունենանք ձեզի կրկին ընդհանուր ժողովի մը պիտի հրաւիրենք այս շատ կարեւոր հարցը քննարկելու համար:

Այս տարի ծնունդն ու Զատիկը տօնեցինք քաղաքիս աւելի մեծ եկեղեցիներուն մէջ: Ունեցանք մօտ 500-էն 600 հաւատազակներ:

9- Գանատայի Առաջնորդարանի հարցը: - Ասոր ծրագիր կանոնագիրը վաւերացնելու համար մասնակցեցանք 3 ժողովներու Թորոնթօյի եւ Մոնթրէալի մէջ: Մեր նպատակն է ունենալ հովիւ մը որուն միակ պաշտօնը ըլլայ հոգալ մեր զաղութին հովուական պէտքերը:

10- Կարաւան 1977: - Քաղաքիս այս յայտագրին համար դիմում եղած է մեր եկեղեցւոյ եւ Խէքէեան Մշակութային Միութեան կողմէ որպէսզի հայկական երկրորդ կեդրոն մը եւս հաստատուի: Այս որոշումը տրուեցաւ երբ մենք հրաւիրուեցանք Խէքէեան միութեան կողմէ: Կուզէնք ձեզի նոյնպէս տեղեկացնել թէ տարուայ վերջաւորութեան մեր ամենաժրջան ու հոգածու անդամներէն պրն. Եղուարդ Էօտեմիշլեան անհանգստացաւ: Իր բացակայութիւնը զգալի էր: Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք մեր պաշտօնակցին:

Ծխական խորհուրդը կը յայտնէ իր շնորհակալութիւնն ու գնահատանքը եկեղեցւոյս բոլոր ծառայողներուն, վարչութիւններուն, յանձնախումբերուն, ուսուցիչներուն, դպրաց դասի ու պարախումբի անդամներուն եւ եկեղեցւոյ բոլոր աշխատողներուն:

ԱՏԵՆԱՅՐՈՒԹԻՒՆ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑՈՑ

Տ ԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Կիրակի 25 Յունուար 1976.

Թորոնթօ

.....

Սուրբ Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ տարեկան ծխական Ընդհ. ժողովը գումարուեցաւ 25 Յունուար 1976 ի Կ.Ե. ժամը 4.20 ին Եկեղեցւոյ սրահին մէջ:

Ժողովիս բացումը կատարուեցաւ Հայր Մերով, առաջնորդութեամբ Գանատայի Առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեանի:

Ստուգելէ վերջ, ներկայ տրատու անդամներու թիւը, 70 հոգիներ, ըստ կանոնագրութեան թիւ 17 յօդուածին, ժողով օրինաւոր յայտարարուեցաւ եւ անմիջապէս ձեռնարկուեցաւ օրուայ դիւանի ընտրութեան. ձայներու մեծամասնութեամբ ընտրուեցան Պրն. Վարդան Վարդանեան որպէս Ատենապետ եւ Պրն. Սարգիս Տէքերմէնճեան Ատենադպիր:

Պրն. Վ. Վարդանեան խնդրեց ծխական Ընդհ. ժողովէն որ զանց առնուի ընթերցումը զանազան տեղեկատուութիւններու, որպէսզի կարելի ըլլայ ժամանակ շահիլ: Ժողովս համայայն գտնուեցաւ բերուած առաջարկին, խնդրելով միւսոյն ատեն որ ապագային, հայերէնով գրուած տեղեկատուութիւններուն կցուի նաեւ տեղեկատուութեան ամփոփ մէկ պատճէնը Անգլերէն լեզուով, որմէ վերջ, ձայներու մեծամասնութեամբ վաւերացուեցան նախորդ տարուայ ընդհ. ժողովին Ատենագրութիւնը, ինչպէս նաեւ 25 Ապրիլ 1975ին գումարուած մասնաւոր ծխ. ընդ. ժողովի Ատենագրութիւնը:

Ապա օրուան Ատենապետը հրաւիրեց Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեանը որպեսզի զեկուցէ: Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեան զեկուցեց երկու հանգամանքներով որպէս Գանատայի Առաջնորդական Փոխանորդ ինչպէս նաեւ որպէս Հովիւ Թորոնթոյի Ս. Երր. Հայց. Եկեղեցւոյ:

Սրբազան Հայրը հակիրճ պատմականը ընելէ վերջ իր Թորոնթօ հաստատուելուն եւ Գանատայի Առաջնորդարանով մը օժտելու Ամէնայն Հայոց Կաթողիկոս եւ Ժայռագոյն Պատրիարք Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Վեհափառի փափաքին, աւելի մանրամասնօրէն բացատրեց անհրաժեշտութիւնը եւ մինչ օրս տարուած աշխատանքները ի յաջողութիւն վերել յիշուած ծրագրին:

Վերջին 9 ամիսներու ընթացքին իր տարած զանազան աշխատանքներուն եւ հովուական այցելութիւններուն մասին անրամասն տեղեկութիւններ տալէ վերջ, Սրբազան Հայրը խօսեցաւ Հոգեւոր հովիւի մը կարեւորութեան մասին եւ ըսաւ թէ անոր անհրաժեշտութիւնը զգալի պիտի ըլլայ մօտիկ ապագային, եւ խոստացաւ համայնքը տեղեկ պահել ատենին:

Անդրադառնալով ապագայ կարգ մը ծրագիրներու, Սրբազան Հայրը ըսաւ թէ իր վերջին այցելութեան ի Ս. Էջմիածին, Վեհափառ Հօր հետ համաձայնութիւն գոյացած է որ ամէն տարի, Թորոնթօէն խումբ մը հայ երիտասարդ երիտասարդուհիներ ղրկուին Հայաստան հետեւելու համար հայագիտութեան դասընթացքներու որոնք պիտի տւեն 1 ամիս ամբողջ. ապա ըսաւ թէ այս տարի ապա ըսաւ թէ այս տարի Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ տեղի ունենայ Միւսոսօրհնէնք եւ թէ միւսոյն ատեն, հանդիսաւորապէս պիտի նշուի Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի զահակութեան 20 ամեակը. փափաքելի պիտի ըլլար որ Թորոնթօն ալ իր ներկայացուցիչները ունենայ այդ արարողութեանց:

Անդրադառնալով Լիբանանայ գաղութին մատուցած դժուարին կացութեան Սրբազան Հայրը կոչ ուղղեց դիւրացնելու հանգանակութեան աշխատանքները Հ.Բ.Ը.Միութեան հետ միասին կազմուելիք յանձնախումբերուն: Ազգային ամէն — օրեայ վարժարանի մը շինութեան ակնարկելով՝ կարելոր չէ թէ ով կը սկսի այդ շատ կարելոր գործը, քայց նման քայլ մը պէտք է արժանանայ մեր բոլորին գնահատանքին եւ աջակցութեան՝ ըսաւ ան Ապա անդրադարձաւ նոր եւ մեծ նկեղծ- ցիի մը շինութեան, կոչ ուղղեց ծխական ժողովիս որպէսզի լիազօրէն ծխական խորհուրդը այդ ուղղութեամբ աշխատանքներ տանելու, ստեղծելով շինութեան յանձնախումբ մը որպէսզի ծխական խորհուրդը առանձինն չմնայ նման ծանօթ պարտականութեան մը առջեւ. փափաքելի պիտի ըլլար որ նկեղծեցուոյս եւ Հ.Բ.Ը. Միութեան միջեւ բանակցութիւններ սկսին այդ ուղղութեամբ եւ թելադրեց որ ընդհ. ժողովս լիազօրէ յաջորդ ծխական խորհուրդը, սկսելու բանակցութեանց: Սրբազան հայրը ըսաւ նաեւ թէ մնայուն բարտուղար մը շատ կարելոր է եւ թէ լրջորէն պէտք է մտածել այդ մասին:

Վերջացնելէ առաջ Սրբազան Հայրը շնորհակալութեամբ խօսք ուղղեց ծխ. խորհուրդի անդամներուն, Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ շաբաթօրեայ վարժարանի խնամակալութեան. ինչպէս նաեւ Տնօրէնուհիին, եւ պաշտօնէութեան, դպրաց դասի անդամներուն, դպրապետին, խմբավարին, երգեցողական հիւններուն, եւ երգեցողական — հարին, ինչպէս նաեւ դպրաց դասու վարչութեան անդամներուն, Տիկնանց յանձնախումբի անդամուհիներուն, Հ.Ե.Ե.Կ.Ա.ի գոյգ վարչութիւններուն, ինչպէս նաեւ սրահիւ հոգատար Պրն. Սերոբին:

Սրբազան հօր զեկոյցի մասին եղան կարգ մը հարցումներ որոնց Սրբազան Հայրը պատասխանեց եւ օրուան Առեւտրային անցաւ յաջորդ օրակարգին:

Պատգամաւորներու կողմէ խօսք առնելով, Պրն. Ս. Ատուրեան, բերանացի տեղեկութիւններ տուաւ պատգամաւորական ժողովի տարած աշխատանքներուն մասին: Թելադրուեցաւ որ պատգամաւորական յանձնախումբը այսուհետեւ իր տեղեկատուութիւնը ներկայացնէ գրաւոր կերպով որպէսզի կարելի ըլլայ միւս տեղեկատուութիւններուն նման մեքենազրել եւ ներկայացնել ժողովիս. թելադրանքը փոխուեցաւ առաջարկի եւ վաւերացուեցաւ միաձայնութեամբ:

Պատուարժան ծխական խորհուրդի Առեւտրային, Արմէն Բիւրօնեանի տեղեկատ- ուութիւնը արժանացաւ քննադատութեանց, մանաւանդ առաջին իսկ պարբերութեան մէջ մոռացութեան տրուած Փոխ Առեւտրային անուան հիշատակութեան պարագան: Պրն. Կարօ Գավուզեան հարց տուաւ թէ ինչու մոռացութեան տրուած է Ողբ. Տիկ. Փերուզ Պապայեանի նկեղծեցուոյս կատարած նուիրատուութիւնը: Առեւտրային տեղ Պրն. Հ. Սուլին պատասխանելով ըսաւ թէ Տիկ. Փ. Պապայեանի կտակին մէջ այդ մասին ոչինչ կայ, եղածը միայն այդպէս ըլլալու փափաքի նամակ մըն է ստորագրուած Տիկ. Փ. Պապայեանի կողմէ եւ թէ տունը մէջի արժէքաւոր առարկաներով պիտի յանձնուի Լ. Պապայեան հիմնադրամի պատասխանատուներուն որմէ վերջ անոնք իրագործելով Տիկ. Փ. Պապայեանի կտակը, տունը եւ առարկաները պիտի յանձնեն, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. նկեղծեցուոյ:

Առեւտրային տեղեկատուութիւնը քննադատուեցաւ նաեւ Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ վարժ. Տնօրէնուհիին շնորհակալական խօսք չարուանակելուն մասին, եւ առա- ջարկուեցաւ որ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնուի Տնօրէնուհիին:

Ձանազան յանձնախումբերու տեղեկատուութիւնները ինչպէս նաեւ ելել — մտական տեղեկատուութիւնները ձայներու մեծամասնութեամբ վաւերացուեցաւ բացի, Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ վարժ. ի խնամակալութեան ելելմտական տեղեկատու- ութենէն. ժողովս որոշեց որ հաշուաւորները մարմինը վերաքննէ հաշիւները եւ ներկայացնէ յաջորդ ծխ. խորհուրդին:

1976ի պիւտժէին մասին լուսաբանութիւններ տրուեցան, ծխ. խորհուրդի գանձապահին կողմէ: Վիճաբանութեան արժանացաւ նիւ Եորթի առաջնորդարանէն եկած նամակը որով նկեղծեցուոյս տարեկան տուրքը հաւելումի կ' ենթարկուի, առ այդ, եւ դիմագրաւելու համար նկեղծեցուոյս հետգհետէ աւելցող ծախսերը, առաջարկուեցաւ տարեկան տուրքը բարձրացնել 20.00 տոլարէն 25.00 տոլարներու եւ իրաւասութիւն տալ ծխ. խորհուրդիս այդ հաւելեալ տուրքը վճարելու:

եթէ պատգամաւորական ժողովը այդպիսի որոշում առնէ: ժողովս որոշեց տարեկան տուրքը 25.00 տոլարներու բարձրացնել եւ անշուշտ հաւելեալ տուրքը վճարել, սակայն նաեւ հրահանգեց պատգամաւորներուն նման որոշումի դէմ քուեարկել պատգամաւորական ժողովի ընթացքին: Տարեկան տուրքը 20 էն 25 ի կը բարձրանայ 1976 Յունուարէն սկսեալ Ռոմէ վերջ Պիտոնէն վաւերացուեցաւ:

Ընտրութիւններու անցնելէ առաջ, ստուգուեցաւ քուէարկութեան իրաւունք ունեցող անդամներուն թիւը որ այդ պահուն հասած էր 97 ի ապա խնդրուեցաւ ընտրողական յանձնախումբի անդամներէն որ ներկայացնեն իրենց ցանկը:

Պրն. Ժիրայր Փէտէրեան յանձնախումբին անունով խօսք առնելով ներկայացուց թեկնածուներու ցանկը 5 հոգիէ միայն փոխան պէտք եղած 6 ին, եւ այդ առթիւ յանձնախումբի անդամներէն Պրն. Յ. Նփրանոսեան խօսք առնելով ըսաւ թէ շատ դժուարութիւն հանեցած են իրենց ցանկը կազմելու եւ հակառակ անոր միայն 5 հոգիներու համաձայնութիւնը կրցած են առնել որպէսզի ծի. ի թեկնածու: Պրն. Նփրանոսեան ըսաւ նաեւ թէ այս շատ անհաճոյ կացութիւն մըն է:

